# ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
# «ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՔՍԱՏՈՒՐՔԵՐԻ (ՀԱՄԱՐԺԵՔ ԱՅԼ ՏՈՒՐՔԵՐԻ, ՀԱՐԿԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ) ԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՀԱՇՎԵԳՐԵԼՈՒ ԵՎ ԲԱՇԽԵԼՈՒ, ԴՐԱՆՔ ՈՐՊԵՍ ԵԿԱՄՈՒՏ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՅՈՒՋԵՆԵՐ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ԿԱՐԳԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՐՑԵՐԻՆ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՄԱՏԵՂ ՎԵՐԱՀՍԿԻՉ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՎԱՎԵՐԱՑՄԱՆ ԿԱՄ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՀԱՐՄԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ ՍՏՈՐԱԳՐԱԾ ԿՈՂՄԵՐԻ՝ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Ներմուծման մաքսատուրքերի (համարժեք այլ տուրքերի, հարկերի և վճարների) գումարները հաշվեգրելու և բաշխելու, դրանք որպես եկամուտ Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների բյուջեներ փոխանցելու կարգի պահպանման հարցերին ուղղված համատեղ վերահսկիչ միջոցառումների անցկացման մասին» համաձայնագիրը (այսուհետ նաև՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2021 թվականի նոյեմբերի 16-ին, Հայաստանի Հանրապետության վարչապետ Նիկոլ Փաշինյանի կողմից: Համաձայնագիրը հանդիսանում է միջազգային պայմանագիր և մտնում է Եվրասիական տնտեսական միության իրավունքի մեջ:

Համաձայնագրով սահմանվող համատեղ վերահսկիչ միջոցառումների հիմնական նպատակները ստուգումն ու վերահսկողությունն են՝

- անդամ պետության լիազորված մարմնի միասնական հաշվին ներմուծման մաքսատուրքերի՝ բաշխման ենթակա գումարների հաշվեգրման նկատմամբ,
- անդամ պետությունների լիազորված մարմինների կողմից անդամ պետությունների բյուջեների միջև բաշխման ենթակա՝ ներմուծման մաքսատուրքերի գումարների ամբողջական ու ժամանակին փոխանցման նկատմամբ,
- անդամ պետությունների լիազորված մարմինների կողմից՝ յուրաքանչյուր անդամ պետության համար սահմանված՝ ներմուծման մաքսատուրքերի գումարների բաշխման նորմատիվների պահպանման նկատմամբ:

Համատեղ վերահսկիչ միջոցառում անցկացնելու համար կազմվում է համատեղ վերահսկիչ միջոցառում անցկացնելու ծրագիր:

Հաշվետու տարվա ծրագիրը մշակվում է այն անդամ պետության պետական ֆինանսական վերահսկողության բարձրագույն մարմնի կողմից, որը համատեղ վերահսկիչ միջոցառում անցկացնելու տարում նախագահում է ԵԱՏՄ մարմիններում: Ծրագիրը համաձայնեցվում է անդամ պետությունների պետական ֆինանսական վերահսկողության բարձրագույն մարմինների հետ և հաստատվում դրանց ղեկավարների կողմից:

Համաձայնագիրը ստորագրվել է Հայաստանի Հանրապետության, Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության, Ղրղզական Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում վերջինիս ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերն անդամ պետությունների կողմից կատարվելու մասին վերջին գրավոր ծանուցումն ավանդապահի կողմից դիվանագիտական ուղիներով ստանալու օրվանից 10 օրացուցային օրը լրանալուց հետո:

2022թ. մարտի 11-ի դրությամբ Համաձայնագիրն ուժի մեջ չի մտել:

2022թ. մարտի 11-ի դրությամբ Համաձայնագիրը ստորագրած կողմերից որևէ մեկը չի ավարտել Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերը:

2021 թվականի նոյեմբերի 16-ին ստորագրված «Ներմուծման մաքսատուրքերի (համարժեք այլ տուրքերի, հարկերի և վճարների) գումարները հաշվեգրելու և բաշխելու, դրանք որպես եկամուտ Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների բյուջեներ փոխանցելու կարգի պահպանման հարցերին ուղղված համատեղ վերահսկիչ միջոցառումների անցկացման մասին» համաձայնագրի վավերացումը կամ հաստատումը Հայաստանի Հանրապետության վարած արտաքին քաղաքականության առումով նպատակահարմար է:

ՀՀ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

X ______________________

ԱՐՄԵՆ ՂԵՎՈՆԴՅԱՆ